

կայ, որ ի մի հաւաքուելով արտասուաց զեռ կղաւնայ: Բայց ինչպէս համարձակուինք աղքատի համար մեծատան սիրտը ջաւեցնել: Է՞ որ նա մեզ պէտք կգայ մի օր: Ո՛չ, հազար ոչ, մենք այդ չենք կարող անել, մեզ պակասում է բարոյական արիութիւն:

Ո՛րքան և քիչ, բայց դարձեալ շատ են այն կարիճները, որոնք ըմբռնում են մարդկային բարձր կոչումը: Բայց ի՞նչպէս քարոզեն գեղեցիկն ու վայելուչը, ի՞նչպէս գէժ դնան նիւթապաշտութեան զետի հոսանքին: Է՞ որ աշխարհը կծաղրէ նոցա, Է՞ որ ծանակ կղաւնան: Բարոյակրթութեան հիւանդոտ վախը խեղդել է արիութեան ոգին: Բայց միթէ աշխարհը միշտ չի՞ ծաղրել սրբութիւն, անաղարտ անուն, աննկուն հերոսութիւն, վախկոտ գաղափարականներ, և մի՞թէ անհաւատների ծաղրից կորել է հաւատը, չքացել առաքինութիւն, մեռել է արդարութիւն:

Ա՛րդ, կարո՞ղ է նիւթապաշտութեան վախից դողդողացող հոգին գաղափարական գուարժութիւն զգար, հոգեոյ յարատե կրջանկութիւն վայելել: Կարո՞ղ է մահուանից աւելի զօրեղ Աստուծով պարծենալ — «Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց...»:

Բարոյական վախկոտութեան ծառը եսականութիւնն է, որի վերայ նիւթապաշտութիւն է ծաղկում. եսականութեան ծառն արմատախիլ անող փրկարար հոգմը ճշմարիտ մարդասիրութիւնն է, որի հովը պարտաճանաչութեան անոյշ բուրմունքն ունի. իւր բարոյական պարտքը հասկացող մարդը վախ չունի, վախ չի իւր կենաց գաղտնիքը իւր անձից դուրս է:

Բարոյական արին այն մարդն է, որ գիտէ տանջուել ու կռուել, որ ընդունակ է չարութեանը պատերազմ՝ հրատարակել իւր անձովը պաշտպանել կրկրպագութեան առարկան. նա այն մարդն է, որ գիտէ ողեորուել երկնաւոր զինուոր վարդապետի խօսքերով. «Ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր»: «Հօ՛ւր եկի արկանել յերկիր»:

Բարոյական արին այն մարդն է, որ պարտականութեան զգացմունքի հրապոյրով յանիրաւի տանջուող ընկերին օգնելու սիրով

կռուի դաշտն է ելնում ու մոռանում է իւր անձի դժբաղդութիւնը. գաղափարի առաջ նսեմանում է անձնական երջանկութեան զգացմունքը:

Եւ վերջապէս բարոյական արին է նա, ով պատրաստ է իւր անձը տալ իբրեւ փրկանք չարութեան ձեռքը գերի ընկած առաքինութեան: հաւատալով՝ որ չի մեռնում հաւատալով թէ Ռոբ կորուսցէ զանձն իւր, գացէ զնա ։

Բարոյական արիութեան համար նիւթական կապ չկայ. անարդարութեան երեսին ապակի հանողն է նա, իւր հացի, իւր բարիքի մինչ իսկ իւր կեանքի գնով: Սորա ոյժը, բարոյականութեան աղբիւրն Աստուած է, նորա փառքը պարտաճանաչութեան սէրն է. խաւար հոգիների մէջ նորա լոյսը Տէրն է, խաւար լճնամիների մէջ ապաւէնն Աստուած: Սորա յաղթական երգը, աներկիւղ համարձակութեան սաղմոսը, հերոսական ոգու շարժիչ մեքենան, միսիթարիչ մրմունջը արիասիրտ մարգարէի հոգեբուլղի աղօթքն է. «Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դուացայց»*:

Բենիկ վարդապետ



ԾԱՂԿԱՔԱՂ ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

(ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔԻՑ)

Եթէ գերեզմանատունը մօտ է քո ընտանիքութեան տեղին, շուտ շուտ գնա՛ այնտեղ, որ յիշես թաղութեանը և խոնարհութիւն սովորես՝ մանաւանդ կրքերդ շարժած ժամանակ: Եւ երբ լսում ես, որ մէկը հոգու վրայ է, շուտ գնա՛ նրա մօտ և տես ինչպէս է հոգին աւանդում մարդը:

— Պահենք խոնարհ մտքով և վախճենք ամբարտաւանութիւնից, որ է ամեն շարեաց մայրը: Անբաղնունք Աստծու խօսքով և սրբերն պատմութեամբ:

* Խօսուած է Նոր-Նախիչեւանի Ս. Լուսաւորի, եկեղեցում 1897 թ.:

— Աստուած պահպանում է աշխատանքներին և չի թողում, որ նրանք կորչեն:

— Առաքինութեան սկիզբը համբերութիւնն է, ախտերի սկիզբը որոյզանամոլութիւնը:

Պահքն ու աղօթքը որպէս արժիւ մեղ բարձրացնում են:

— Հայր Իսիդորն ասաց. «Եթէ ցանկանում ես դու երկնքի արքայութեան արժանանալ, արճամարճի՛ր հարստութիւնը, արծաթասէրը և որկրամոլը չեն կարող մօտենալ Աստծուն»:

— Մի հայր ասաց. «Կրօնաւորն համար մեծ դանձարան է կամաւոր աղքատութիւնը՝ դա անհասնում հանդստութիւն է և յաւիտենական կեանքի մուտքն է»:

— Անընչապէ՛ր կրօնաւորն արծուի է նման, որ բարձրաթռիչ սլանում է, սրառես է և միայքը յստակ:

— Արժաթասէրը լցնում է իւր շտեմարանները իսկ անընչապէ՛րը դանձ է դիզում երկընքում:

— Հայր Պիմէնն ասաց. «Ոչ թէ մարմինը պիտի սպանենք, այլ մարմնոյ ախտերը»:

— Կրօնաւորը, եթէ չը լիործուի ու չը համբերէ, չի կարող քաջ ախոյեան լինել, հոգեւորականի նշանաւորը համբերութիւնն է:

— Մի ճղնաւոր կուրացաւ. նա աղօթելիս ոչ թէ աչքի լոյս էր խնդրում Աստծուց, այլ համբերութիւն:

— Երբ կրակը վառւում է, ոչ միեղի ոչ ղենուռն, ոչ սողուն չեն մօտենում նրան. իսկ երբ սկսում է հանգչել, այն ժամանակ մօտենում են նրան բոլոր այդ տեսակ միջատները: Այսպէս է և կրօնաւորը. քանի որ նրա հաւատը ջերմ է՝ նա եռանդուն է, աղօթասէր, բարեպաշտ, բարեգործ է, չարը չի մօտենում նրան, նա վաշխւում է. բայց երբ պաղում է նա Աստուածօրութիւնից, շուտով ախտերը մօտենում են նրան և նա ապականւում է:

— Երբ մէկը ողորմութիւն է տալիս, այնպէս պիտի համարէ, որ ինքը ոչ թէ տալիս, այլ առնում է:

— Հայր Պիմէնն ասում էր. «Ամեն վշտի կարող ես յաղթել խոնարհութեամբ, չարով չարը չի դարձանալի, այլ բարութիւնով յաղթի՛ր չարին»:

— Հայր Անտոնն ասում էր. «Ես չեմ վախենում Աստծուց, վասն զի սիրում եմ նրան. իսկ ուր սէր կայ, այնտեղ երկիւղ չը կայ» (համ. Ե. Թով. Գ. 18):

— Հայր Թովհանէս Կարճահասակն ասում է. «Ինչպէս չի կարելի տունը շինել վերնից ներքեւ, այլ պէտք է հիմքից սկսել այնպէս էլ մարդկա-

յինն Աստուածալայել կատարելութեան չի հասնել առանց ընկերսիրութեան. վասն զի ընկերսիրութիւնն է քրիստոնէական պատուիրանների հիմքը:

— Արտեղ ապաշխարութիւն կայ, այնտեղ զօրութիւն չունի մեղքը:

— Թաղաւոր է նա, ով տիրում է իւր ախտերին:

— Ով արդարացնում է իւր անձը Աստծու առաջ, ինքն իրեն սպանում է:

— Կրօնաւորն անդադար պիտի զբաղուի գործով:

Նիկողայոս Աբ. Տ. Աւետիքեան.



Մ Ո Մ.

(Թարգմանութիւն Տոլստոյից).

Լուարուք զի սասցաւ. ական ընդ ական և ասումն ընդ ասուման: Այլ ես ասեմ ձեզ, մի կալ հակառակ չարին.

Մատթ. Ե. 38, 39.

Դիմի՛ր կատարուում էր պարօնների օրով: Ամէքը պարօն էին:

Կային այնպիսիները, որոնք յիշելով իրենց սե օրը և Աստուծուն, գութ ունէին դէպի մարդիկ՝ կային նաեւ շներ, անունն հեռի իրենցից, Բայց չկային աւելի վատթար իշխաններ, քան ճորտութիւնից բարձրացածները, քան այնպիսիները, որոնք ցնխից ելան, իշխան եղան: Եւ հէնց ամենից աւելի նրանց պատճառով ծանր էր կեանքը:

Այսպիսի մի գործակատար բոյն էր գրել մի պարօնի կալուածքում: Դիւզացիք հարկատու էին իրենց պարօններին: Հող շատ էր, այն էլ բերրի հող, կար նաեւ ջուր, արօտատեղիք և անտառ: Ամէքին առատ բաժին էր հասնում ամեն ինչից, և՛ զիւղացիներին, և՛ պարօնին. բայց պարօնն ուրիշ բաժնից եկած և իրեն տան ծառայող մէկին նշանակից գործակատար:

Իւր ձեռքն առաւ այս գործակատարը իշխանութիւնը և նստաւ խեղճ զիւղացիների